

նուէր մանուկներին. Գ. Սեւե-Իլերի՝ Բու. Թարգմ. աստերէնից: Ս.-Գետեր-
բուրգ, 1903 թ., դինն է 12 կողմ:

Այս փոքրիկ պատմուածքը բելլետրիստական ձևով մա-
նուկներին ծանօթացնում է լուսի կեանքի հետ Բազմաթիւ գե-
ղեցիկ նկարներ աւելի ևս խորժելի են դարձնում փոքրիկ
ընթերցողների գործը: Տպագրութիւնը շքեղ է, խնամքով, թէև
զերծ չէ մի քանի վրիպակներից և թարգմանական թերութիւն-
ներից («աեղաւորուեց» եր. 14, «սկսեց փորեք բուսի յետևը» եր.
16, «կը կըցահարեմ», եր. 18), որոնցից պէտք է խոյս տալ
մանկական ընթերցանութեան գրքոյկներում: Գինը շատ էժան է:

Na.

«Իսասագիրք ընդհանուր աշխարհագրութեան». Մասն Ա. առաջին աս-
րի. կազմեց Հ. Յովհաննիսեանց:

Ընհանուր աշխարհագրութեան այս դասագրքով անցնում
են մեր դպրոցների առաջին դասարաններում: Յայտնի է որ
մինչև այդ դասարանը, աշակերտների մտաւոր հորիզոնը սահ-
մանափակուած է լինում այն պատրաստականութեամբ միայն,
ինչ տուել են նրան նախակրթարանների լեզուների և թւա-
բանութեան դասերը: Մեզ շրջապատող բնութիւնն իր հազար
ու մի տեսակ փոփոխութիւններով, նրա միջի անթիւ հարըս-
տութիւնները այդ աշակերտների համար մի անծանօթ երկիր
է: Ուսուցիչը իր դասերով, հեղինակը իր դասագրքով պէտք
է սկզբից սխտեմատիկօրէն ծանօթացնեն աշակերտին իր այդ
շրջապատի հետ: Դժբախտաբար այս կարևոր կէտը սակաւան-
գամ չէ վրիպում յիշեալ հեղինակի աչքից: Շատերից երկու օ-
րինակ.

«Այն կէտը, որ գտնուում է երկնքում՝ դիտողի զլիսին
ուղղահայեաց, տեսանելի երկնակամարի ամենաբարձր կէտն է
և կոչուում է զէնիթ, իսկ այն կէտը, որ գտնուում է անտեսա-
նելի երկնակամարի վրայ դիտողի ոտներին ուղղահայեաց՝ նա-
դիր: Զէնիթը և նադիրը տեսանելի և անտեսանելի երկնակա-
մարի ամենահեռաւոր և հակադիր կէտերն են» (էջ 6):

Թէ այդ անտեսանելի երկնակամարը և թէ նրա վրայ գրտ-
նուող նադիրը հասկանալի չեն կարող լինել աշակերտների համար,
եթէ նրանք չունենան երկրի գնդաձևութեան գաղափարը: Իսկ